



22 մայիսի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՃՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՉՊԵՏՔ Ե ԿԱՅԱՑՎԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հայ իրավաբանական Միությունը՝ աշխարհում հայկական ծագում ունեցող դատավորների, փաստաբանների և իրավագիտության ուսանողների ամենամեծ կազմակերպությունը, իր խորին մտահոգությունն է հայտնում վերջերս մեջտեղ եկած հայտարարության նախագծի կապակցությամբ («Հայտարարություն»), որը պետք է կատարվի Վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի կողմից:

Հայտարարության շրջանառվող տեքստը նախատեսում է, որ Հայաստանը և Ադրբեջանը, ի թիվս այլ բաների, Ռուսաստանի միջնորդությամբ պետք է սահմանազատեն և սահմանագծեն իրենց ընդհանուր սահմանը: Վերանայելով Հայտարարության տեքստը, մենք եզրակացրել ենք, որ այն, իր այժմյան տեսքով ցավալիորեն անհամարժեք է իր ենթադրյալ նպատակների համար և կարող է անդամնալիորեն վնասել հայ ազգի շահերին, որ այդ հայտարարությունը նպատակ ունի հնարավորություն ընձեռել քաղաքական գործողությունների, որոնք գերազանցում են Հայաստանի Հանրապետության կառավարության գործող սահմանափակումները («Կառավարություն»), և որ Հայտարարությունը չի երաշխավորում, որ Ադրբեջանը բարեխղճորեն կհամագործակցի երկարաժամկետ խաղաղությանը և Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ժողովուրդների անվտանգությանը առանց հետագա սպառնալիքների:

Մենք վճռականորեն հորդորում ենք Վարչապետի պաշտոնակատարին և կառավարությանը որևէ համաձայնագիր չկնքել Ադրբեջանի հետ, քանի որ նրանք ներկայումս դա անելու իրավասությունը չունեն, ինչպես նաև չունեն բնակչության կողմից իրենց տրված մանդատ: Նախքան որևէ ճակատում որևէ բան ձեռնարկելը, առնվազն պետք է պահպանվեն հետևյալ երեք պայմանները. (i) Ադրբեջանը պետք է անհապաղ ազատ արձակի բոլոր հայ ռազմագերիներին և այլ պատանդներին. (ii) Ադրբեջանը պետք է իր բոլոր զինվորներին և հարակից անձնակազմին հեռացնի Հայաստանի տարածքից. (iii) Հայաստանում պետք է տեղի ունենան խորհրդարանական ընտրություններ և կազմվի պաշտոնական կառավարություն:

I. Սույն Հայտարարությունը դժվար թե իրագործի իր նպատակները, քանի որ դա հակասում է 2020 թ. Նոյեմբերի 9-ի հրադադարի մասին հռչակագրին և կարող է վնասել հայ ազգի շահերին:

Նախագահ Իլիամ Ալիևը հրապարակավ հայտարարել է, որ հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատումը և սահմանագծումը կազմում են. 1) Հայաստանի կողմից Ադրբեջանի սահմանների ճանաչումը, ինչպես նաև Արցախի ճանաչումը որպես Ադրբեջանի մաս այդ սահմանների մեջ, և (2) նախապայման, տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերը ապաշրջափակելու և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը ավարտելու համար:

Հայտարարությունն այս ձևով հակասում է 2020 թվականի նոյեմբերի 9-ին հայտարարված հրադադարի մասին համաձայնությանը: Հրադադարի մասին համաձայնագիրը միտումնավոր լռում էր Արցախի կարգավիճակի վերաբերյալ և ոչ մի կերպ չէր կանխորոշում այն, առավել ևս՝ Արցախը համարել Ադրբեջանի մաս: Ավելին, հրադադարի մասին հռչակագրի 9-րդ կետում նշվում է, որ տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը պետք է ապաշրջափակվեն՝ առանց նշելու որևէ նախապայման, կապված սահմանի սահմանազատման ու սահմանագծման հետ ինչպես Ադրբեջանն է ուզում:

Քանի որ Հայաստանը Արցախի անվտանգության երաշխավորն է, ի վերջո, պետք է հասկանալի լինի, որ ցանկացած սահմանի որոշում չպետք է խոչընդոտի ԵԱՀԿ Մինսկի խմբի միջոցով Արցախի ապագա կարգավիճակի հանգուցալուծմանը: Պետք է նաև ապահովվի, որ տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերի բացումն ընթանա սահմանների սահմանազատման և սահմանագծման ցանկացած գործընթացից լիովին անկախ:

Ավելին, մենք տեսնում ենք, որ այս Հայտարարությունը ձգտում է Հարավային Կովկասի տարածաշրջանում «ամրապնդել խաղաղություն, կայունություն ու անվտանգություն»: Սակայն հիշեցնեք, որ Հայաստանի համար «խաղաղություն, կայունություն և անվտանգություն» հնարավոր չէ երաշխավորել առանց տրանսպորտային միջանցքների նրա սուվերեն և արդյունավետ վերահսկողության, մասնավորապես ռազմավարական նշանակության ճանապարհների, որոնք միացնում են մեր գավառները իրար հետ և նաև հարևան երկրների, այդ թվում՝ Վրաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Կարծում ենք, որ Հայտարարությունը, ինչպես առկա է, համարժեքորեն չի ապահովում այս արդյունքը:

Իրականում, 2020 թ. Նոյեմբերի 9-ի զինադադարի համաձայնագրի պատմությունը ցույց է տալիս, որ Հայաստանն արդեն ցավալի զիջումների է գնացել, այդ թվում՝ հրաժարվելով Լաչինի միջանցքի վերահսկողությունից, որպեսզի կարողանա պահել այն տարածքը, որով անցնում են դեպի Վրաստան ռազմավարական նշանակության ճանապարհները: Եթե Հայտարարությունը հանգեցնի նրան, որ Հայաստանը այս ճանապարհահատվածների վերահսկողությունը նույնպես կորցնի, դա մեկ անգամ ևս կապացուցի, որ սույն Հայտարարությունը հակասում է հրադադարի մասին պայմանավորվածությանը և վնասում է Հայ ազգի կենսական շահերին:

II. Վարչապետի պաշտոնակատարը և ժամանակավոր կառավարությունը չունեն քաղաքական օրինականություն սույն Հայտարարությունը կատարելու և Հայաստանի Հանրապետության կողմից հանձնաժողովի պատվիրակներ նշանակելու համար:

Հիշեցնենք, որ Վարչապետի պաշտոնակատար Փաշինյանը իր կառավարության մյուս անդամների հետ միասին հրաժարական է տվել 2021 թ. ապրիլի 25-ին: Այդ ժամանակից ի վեր նա և իր կառավարությունը միջանկյալ պաշտոնում են ծառայում մինչև հաջորդ խորհրդարանական ընտրությունները, որոնք ներկայումս նախատեսված են 2021 թ. Հունիսի 21-ին:

Հիշեցնում ենք, որ սույն Հայտարարությունը չի սահմանում լայն կիրառման որևէ օբյեկտիվ իրավական սկզբունք, որի միջոցով կնշվեն փոխադարձաբար ընդունելի սահմաններ: Սա լուրջ անհանգստության առիթ է, քանի որ սահմանային որոշումները կարող են վտանգել մարդու հիմնարար իրավունքները, այդ թվում՝ կյանքի իրավունքը, ազատության և անվտանգության իրավունքը, ազատ տեղաշարժի իրավունքը, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ապրուստ հայթայթելու իրավունքը:

Այս նույն հիմնարար իրավունքները վտանգվելու են նաև խորհրդային ժամանակաշրջանի սահմանների ցանկացած վերականգնումով: Սահմանները, որոնք հիմնված են եղել տնտեսական, քաղաքական և անվտանգության հանգամանքների վրա ավելի քան երեսուն տարի առաջ խորհրդային Միության օրոք, հաշվի չեն առնում ժամանակակից, նյութապես տարբեր՝ տնտեսական, քաղաքական և անվտանգության այսօրվա իրողությունները:

Նախորոշված օբյեկտիվ իրավական չափանիշների բացակայության պայմաններում, որոնք չեն ներառում և պաշտպանում մարդու անձեռնմխելիության իրավունքները, դիտարկվող հանձնաժողովի սահմանադրությունը և պատվիրակների նշանակումը դառնում են քաղաքական որոշումներ, որոնք կարող են սահմանափակել ՀՀ քաղաքացիների ապագա սերունդների տարրական իրավունքները:

Մենք մեր լուրջ մտահոգությունն ենք հայտնում, որ նման քաղաքական որոշումները անհամատեղելի են ՀՀ ժամանակավոր կառավարության սահմանափակ օրինականության հետ:

III. Բարեխղճորեն բանակցելու Ադրբեջանի պատրաստակամության համարժեք երաշխիքներ չկան:

Մեզ անհանգստացնում է նաև Ադրբեջանի կողմից անբավարար երաշխիք՝ բանակցելու և բարեխղճորեն պարտավորություններ կատարելու

պատրաստակամության վերաբերյալ, առանց որի Կառավարության կողմից հետագա ցանկացած զիջում կարող է միայն խաթարել հայ ժողովրդի շահերը:

Մասնավորապես, սա Ադրբեջանի հետ առաջին պայմանագիրը չէ 2020 թվականին Արցախում տեղի ունեցած պատերազմից հետո: 2020 թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջ Հայաստանը և Ադրբեջանը պարտավորվել էին իրագործել «Լեռնային Ղարաբաղի հակամարտության տարածքում լիակատար հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների դադարեցման» և բոլոր «ռազմագերիների, պատանդների և կալանավորված այլ անձանց փոխանակումը»: Այնուամենայնիվ, Ադրբեջանի ռազմական ներխուժումները Հայաստանի ինքնիշխան տարածք և 2020 թ.-ի Նոյեմբերի 9-ից հայ ռազմագերիների և այլ պատանդների մինչև այժմ գերի պահելը և նրանց խոշտանգումները, ցույց են տալիս, որ Ադրբեջանը բարեխղճորեն չի մասնակցում եռակողմ հայտարարությանը և չի ցանկանում պահպանել իր ստանձնած միջազգային պարտավորությունները:

Այս անհանգստացնող հանգամանքների պայմաններում, Նույնիսկ եթե Հայտարարությունը պայմանավորվեր Ադրբեջանի ուժերը Հայաստանի տարածքից դուրս բերել, այդ դրույթը դեռևս անբավարար երաշխիք կլիներ հայ ռազմագերիների և պատանդների ազատման համար, և դա չէր բացառի Ադրբեջանի կողմից ապագա սպառնալիքներին՝ Հայաստանի կառավարությունից լրացուցիչ զիջումներ ստանալու համար:

* * * * *

Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սկսված 2020 թ. պատերազմը, իր բոլոր հետևանքներով ներկայումս գոյատևման ահռելի մեծ մարտահրավեր է Հայաստանի և Արցախի համար: Մենք չենք կարող չընդգծել սխալ քայլերի հնարավոր գինը Հայաստանի և Արցախի առջև ծառայած այս կարևոր հանգույցում և հորդորում ենք կառավարությանը գործել թափանցիկ՝ առավելագույնս հաշվի առնելով Հայաստանի, Արցախի և հայ ժողովրդի շահերը:

Հարգանքով՝

Հայ Իրավաբանական Միություն



Լուսինե Վարպետյան
Նախագահող